



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ

« 04 » 03 2013թ.

Թիվ 1/1574

Երևան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՓՄՁ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ» ՈՒՆԻԿԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ  
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ  
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը, «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 9.2 հոդվածը, «Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալը, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի և տեխնիկական հագեցվածության պահանջները» Կանոնակարգ 13-ի 72-րդ կետը, հաշվի առնելով ՀՀ կենտրոնական բանկի «Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի» (27.02.2013թ. արձանագրություն թիվ 10) եզրակացությունը և քննարկելով «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ի 06.02.2013թ. էլեկտրոնային միջնորդագիրը և կից փաստաթղթերը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Գրանցել «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ի նոր խմբագրությամբ կանոնադրությունը՝ հաստատված 25.01.2013 թվականին, բաժնետերերի ընդհանուր ժողովի թիվ 37 որոշմամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ԶԱՎԱԴՅԱՆ